ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2024 թվականի ապրիլի 3-ի թիվ 4 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/08»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար դյուրակիր համակարգիչների և բազմաֆունկցիոնալ լազերային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/08» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 02.04.2024թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 03.04.2024թ. տրամադրված պարզաբանումը՝

<u>Հարցադրում</u>

«Հարգելի՛ Հանձնաժողով, բազմաթիվ արտադրողներ ներկայումս արդեն արտադրում են մեկից ավել միջուկ ունեցող պրոցեսորներով տպիչներ, որոնք անկասկած ավելի արագագործ են: Հրավերի 2-րդ լոտով նշված բազմաֆունկցիոնալ տպիչի առաջնային բնութագրերի հանդեպ սահմանված տպելու, սկանավորելու, պատճենահանելու և հարակից ֆունցիաների արագագործությունը կարող են ապահովել նաև 2 միջուկանի 800 մՀց կամ 2 միջուկանի 1000 մՀց արագությամբ պրոցեսորով համալրված բազմաֆունկցիոնալ տպիչներ: Քանի որ էականը և հարակից ֆունցիաների արագագործությունն է, և եթե առաջարկվելիք սարքը ապահովում է այդ արագագործությունը, ապա պրոցեսորի հաճախականությունը էական բնույթ չի կրում, քանի որ վերը նշված ֆունկցիաների արագագործությունը պայմանավորված չէ միայն հիշողության ծավալով կամ պրոցեսորի արագությամբ, էական է նաև բուն տպիչի օպերացիոն համակարգը, դրա պահանջները ապարատային ռեսուրսների նկատմամբ և այդ օպերացիոն համակարգի արագագործությունը, պրոցեսորի միջուկների քանակը: Հաշվի առնելով վերը բերված տեխնիկական հիմնավորումը՝ խնդրում եմ տեխնիկապես բավարար համարել բոլոր սահմանված հիմնական բնութագրերին (տպել, սկանավորել, պատճենահանել) բավարարող սարքերը, քանի որ երբ արտադրողները հայտարարագրում են արագագործության ցուցանիշները, ուրեմն համալրել են այդ սարքերը համապատասխան պրոցեսորով, հիշողությամբ, ցանցային քարտով, օպերացիոն համակարգով, միկրոծրագրային ապահովմամբ և այլ անհրաժեշտ բաղկացուցիչներով»:

<u>Պարզաբանում</u>

«Հայտնում ենք, որ առաջարկվող ապրանքները պետք է համապատասխանեն հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին»:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/08» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Աիդա Հովհաննիսյանին:

Հեռախոս՝ 010 511-774:

Էլեկտրոնային փոստ՝ ddgnumner@court.am:

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/08» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: